

Աջարիայի Ինքնավար Հանրապետության մայրաքաղաքի՝ Բաթումիի օրվա տոնակատարությանը իր մասնակցությունն էր բերել ՀՀ Վանաձորի քաղաքապետարանի պատվիրակությունը քաղաքապետ Մամիկոն Ասլանյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին քաղաքապետարանի կրթության և գիտության բաժնի ղեկավար Գոռ Բադալյանը և աշխատակազմի ղեկավար Արթուր Օհանյանը:

2018 թվականի սեպտեմբերի 2-ին,տոնակատարության շրջանակներում, Վանաձորի քաղաքապետարանի պատվիրակությունը, Բաթումիում ՀՀ Գլխավոր հյուպատոս Եղիշե Սարգսյանի ընկերակցությամբ, այցելեց Վիրահայոց թեմի Սուրբ Փրկիչ եկեղեցի և մասնակցեց կիրակնօրյա Սուրբ և Անմահ Պատարագին:



Օրվա Պատարագիչն էր Գեղարքունիքի թեմի Մարտունու շրջանի հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Գևորգ քահանա Տեր-Բարսեղյանը: Պատարագին ներկա էր նաև Արթիկի թեմի հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Եղիշե քահանա Նազարյանը:

Սուրբ Պատարագի վերջին Վիրահայոց թեմի Աջարիայի, Գուրիայի, Իմերեթիի հայության և Բաթումի Սբ. Փրկիչ եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Արարատ քահանա Գումբալյանը ներկա հասարակությանը շնորհավորեց Բաթումիի տոնի կապակցությամբ, փոխանցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի ողջույնը և օրհնությունը մայր հայրենիքի բարձրպաշտոնյա հյուրերին և արժևորեց տեղի համայնքի ավանդն ու նվիրվածությունը ծովափնյա այս քաղաքում հայկական շունչն ու քրիստոնյա հավատը պահպանելու գործում:





